

# ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ

Կալիֆոռնիան առաջատար նահանգ է՝ աղբը նվազեցնելու, վերամշակումն ավելացնելու և ջերմոցային գազերի կրճատման հարցում: Athens Services-ն այստեղ է, որպեսզի օգնի ձեզ հասկանալ այս նահանգային մանդատները և համոզվելու, որ դուք ունեք թափոնների և վերամշակման համապատասխան ծրագրեր:

## SB 1383 (2016) ԿԼԻՄԱՅԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԱՂՏՈՏՈՂ ԼՅՈՒԹԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

SB 1383 օրենքն ուղղված է աղբավայրերից մեթանի արտանետումների կրճատմանը: Օրենքը նպատակներ է սահմանում մինչև 2025 թվականը 75%-ով նվազեցնելու օրգանական թափոնների հեռացման ցուցանիշը ողջ նահանգում՝ 2014 թվականի համեմատ: Այն նաև պահանջում է, որ ներկայումս աղբ նետված սննդամթերքի առնվազն 20%-ը մինչև 2025 թվականը վերականգնվի մարդկանց սպառման համար՝ ամբողջ նահանգում:

2022 թվականի հունվարի 1-ից սկսած՝ բոլոր ձեռնարկությունները, բազմաբնակարան համալիրները և սեփական տան բնակիչները պարտավոր են բաժանորդագրվել օրգանական նյութերի հավաքագրման ծառայությանը և պետք է տարանջատեն իրենց կանաչ օրգանական տարայի մեջ ԲՈՒՈՐ կանաչ թափոնները, սննդի մնացորդները և սննդով աղտոտված թուղթը (100% մանրաթելի հիմքով):

Բացի այդ, ուստի սնունդ արտադրողները/գեներատորները (1-ին և 2-րդ աստիճանի համարվողները) պետք է վերականգնեն սննդի առավելագույն ծավալը, որն այլ կերպ աղբը կնետվեր, պետք է կազմակերպեն սննդի նվիրատվություն և հավաքագրում՝ սննդի վերականգնման կազմակերպությունների կամ ծառայությունների հետ պայմանագրերի կամ գրավոր համաձայնագրերի միջոցով, և պահպանեն սննդի նվիրատվության գրառումները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [AthensServices.com/FoodDonation](https://AthensServices.com/FoodDonation).

### 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԻՋՆԵՄՆԵՐ

Ուժի մեջ է՝ 2022 թ. հունվարի 1-ից

- Սննդամթերքի դիստրիբյուտորներ
- Սննդամթերքի մեծածախ վաճառողներ
- Սննդի ծառայություններ մատուցողներ
- Մթերային խանութներ և աուպերմարկետներ (10,000 քառակուսի ոտնաչափ կամ ավելի)

### 2-ԴՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԻՋՆԵՄՆԵՐ

Ուժի մեջ է՝ 2024 թ. հունվարի 1-ից

- Առնվազն 200 սեյակ և տեղում սննդի հարմարություն ունեցող հյուրանոցներ
- Ռեստորանային հաստատություններ (5000 քառակուսի ոտնաչափ կամ ավելի մեծ, կամ 250-ից ավելի նստեղու տեղեր)
- Տեղական կրթական գործակալություններ՝ տեղում սննդի հարմարությունով
- Առողջապահական հաստատություններ՝ տեղում սննդի հարմարությունով և 100+ մահճակալով
- Խոշոր համալիրներ (ներառյալ առևտրի կենտրոններ և համալիրներ) և միջոցառումների վայրեր՝ օրական 2000+ այցելուներով

## ԸՆԴՈՒՆՆԵԼԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ՝



### ԿԱՆԱՉ ԹԱՓՈՆ

Կտրած ծաղիկների և թփերի մնացորդներ  
 Հնձած խոտ  
 Տերևներ և ճյուղեր  
 Փայտանյութ, փայտի ջարդոն և նրբատախտակ (չներկված կամ չմշակված)  
 Մոլախոտեր



### ՄԱՆԻ ՄԱՅՈՐԴՆԵՐ

Հաց, բրինձ և մակարոնեղեն  
 Պանիր և կաթնամթերք  
 Մուրճի մրուր և ֆիլոյր  
 Մրգեր և բանջարեղեն  
 Ծաղիկներ և խոտաբույսեր  
 Միս, ոսկորներ և թոչնամիս  
 Կենդանիների սնունդ (ոչ դեղորայքային)  
 Ծովամթերք և փափուկ կեղևներ



### 100% ՄԱՆՐԱԹԵԼԻ ՀԻՄՔՈՎ, ՄԱՆՈՎ ԱՂՏՈՏՎԱԾ ԹՈՒՂԹ

Սննդով աղտոտված թուղթ  
 Չվի թղթե տուփեր  
 Թղթե անձեռոցիկներ և խոհանոցային սրբիչներ  
 Պիցցայի տուփեր  
 Ափսեներ  
 Սննդի տուփեր (առանց կափարիչի)  
 Փայտե և մանրաթելերից սպասք

*\*Պետք է 100% մանրաթելի հիմքով լինի: Նավթի հիմքով պլաստմասսե, մոմե կամ կենսապլաստիկ ծածկույթով, էրեսպատումով կամ լամինատով նյութեր ՉԻ ԿԱՐԵԼԻ*

## AB 827 (2019) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ. ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՂԲԱՄԱՆՆԵՐ

AB 341 և AB 1826 չափանիշներին ենթակա ձեռնարկությունները, սև աղբամանի հետ մեկտեղ, պետք է հաճախորդներին տրամադրեն (2020թ. հուլիսի 1-ին կամ դրանից առաջ) վերամշակման և օրգանական նյութերի համար նախատեսված տարաներ (ներառյալ սննդի մնացորդների)՝ մուտքի դիմացից հասանելի: Բոլոր երեք աղբարկղերը պետք է խմբավորված լինեն, հեշտությամբ հասանելի և տեսանելի լինեն, հստակ նշվեն ցուցանակներով, թե ինչ է «կարելի կամ չի կարելի տեղադրել յուրաքանչյուր տարայում», և պատշաճ կերպով սպասարկվեն վերամշակման և կոմպոստավորման համար:

Մննդի սպասարկման բոլոր առևտրային ձեռնարկությունները, որոնք սնունդ են մատակարարում՝ տեղում գնելու և անմիջապես սպառելու համար, պետք է համապատասխանեն AB 827-ին: «Ամբողջական սպասարկում տրամադրող ձեռնարանները» ազատված են, քանի դեռ նրանք իրենց աշխատակիցների համար տրամադրում են օրգանական նյութերի և վերամշակման աղբամաններ՝ հաստատության հետևի մասում: Ամբողջական սպասարկում տրամադրող ձեռնարանները սահմանվում են որպես այն ձեռնարանները, որտեղ հետևյալ բոլոր նշվածները համապատասխանում են.

- Հաճախորդները ուղեկցվում են կամ ուղղորդվում են դեպի նշանակված սննդի տարածք:
- Հաճախորդների սննդի և խմիչքի պատվերներն ընդունվում են նստելուց հետո:
- Մննդի և խմիչքի պատվերները, ինչպես նաև ցանկացած այլ պահանջվող ապրանքներն առաքվում են անմիջապես հաճախորդներին:
- Անդորրագիրը տրամադրվում է անմիջապես հաճախորդին՝ նշանակված սննդի տարածքում:



## AB 619 (2019) ԲԵՐԵՔ ՉԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՎԵՐՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄՆՆԴԻ ԵՎ ԸՄՊԵԼԻՔԻ ՏԱՐԱՆԵՐԸ

Այս օրենքը բացահայտորեն թույլ է տալիս բազմակի օգտագործման սննդի տարաները լցնել՝ սննդի կետի սեփականատիրոջ/ աշխատողի կամ սպառողի կողմից: Սպառողները կարող են տրամադրել իրենց սեփական բազմակի օգտագործման տարաները: Հաստատությունները կարող են սպառողների վերադարձրած տարաներն ընդունել՝ կրկնակի օգտագործման համար: Օրինագիծը ժամանակավոր սննդի կետերին թույլ է տալիս նաև օգտագործել բազմակի օգտագործման սպասք, երբ այն հաստատվի տեղական հարկադիր մարմնի կողմից: Այս օրենքը թույլ է տալիս սպառողներին բազմակի օգտագործման տարաներ բերել սննդի կետ, որը լցնում է աշխատողը կամ հաճախորդը՝ [որոշակի պայմանների առկայության դեպքում](#): AB 619-ը չի պարտադրում բազմակի օգտագործման պարագաների օգտագործումը:

## AB 1826 (2014) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ.

Այս օրինագիծը պահանջում է բիզնեսներին և բազմաբնակարան շենքերին (5 և ավելի միավորից բաղկացած), որոնք շաբաթական 2 խորանարդ յարդ կամ ավելի կոշտ թափոններ են առաջացնում, կազմակերպել օրգանական նյութերի վերամշակման ծառայություններ: 2022 թ. հունվարի 1-ից բոլոր ձեռնարկությունները պարտավոր են հետևել SB 1383 կանոնակարգերին:



Athens-ի կոմպոստացման ծրագիրը վերամշակման գործընթացի անբաժանելի մասն է: Տեղական օրգանական թափոնների վերամշակմամբ մենք կարող ենք ստեղծել սննդանյութերով հարուստ հողի հավելումներ, որը կարող է կրկին օգտագործվել այն համայնքներում, որտեղ մենք ծառայում ենք:

### ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՉԵՐ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՇԵՏ

Athens-ը վերամշակում է օրգանական թափոնները մեր American Organics կոմպոստավորման հաստատությունում: Կոմպոստավորման և ցանքածածկի միջոցով Athens-ն օգնում է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները՝ սահմանափակելով աղբավայրում օրգանական նյութերի քայքայման արդյունքում առաջացող մեթան գազի քանակը:

## AB 341 (2011) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Կալիֆոռնիայի վերամշակման ջանքերին զարկ տալու համար AB 341-ը սահմանեց նահանգի վերամշակման նպատակը՝ 75% մինչև 2020 թվականը: Այս օրենքը պահանջում է կազմակերպել վերամշակման ծառայություններ Կալիֆոռնիայի այն առևտրային կամ հասարակական կազմակերպություններին, որոնք շաբաթական չորս կամ ավելի խորանարդ յարդ կոշտ թափոններ են արտադրում են, ինչպես նաև՝ հինգ կամ ավել բնակարան ունեցող բազմաբնակարան բնակելի տները: